ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ Նարեկ Սարգսյանի՝ 2017 թվականի մայիսի 15-ից 18-ը Ֆրանսիայի Հանրապետության Փարիզ քաղաքում կայացած Ազգային քաղաքաշինության քաղաքականության երկրորդ միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Նարեկ Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ

3.Գործուղման վայրը և ժամկետը՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ), 2017 թվականի մայիսի 15-ից 18-ը

4.Հրավիրող կողմը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ) և ՄԱԿ-ի Հաբիթաթ

5.Գործուղման նպատակը՝

Համաժողովի հիմնական նպատակն էր՝ քննարկել մի շարք հարցեր, որոնց շրջանակներում առավելապես կարևորվում էին «Օրակարգ 2030» և «Փարիզյան համաձայնագիրը»:

6. Քննարկված թեմաները՝

Համաժողովում առանցքային թեմաներն էին՝ «Օրակարգ 2030»-ը և ՄԱԿ-ի 193 անդամ պետությունների կողմից համաձայնեցված փաստաթուղթը, որը ներառում է 17 կայուն զարգացման նպատակներ, որոնց պետությունները պետք է հասնեն մինչև 2030 թվականը:

Նարեկ Սարգսյանի կողմից համաժողովում ներկայացվեցին Հայաստանի Հանրապետության ձեռքբերումները, տարվող աշխատանքները և հետագա քայլերը, որոնք նախատեսված են «Օրակարգ 2030»-ի կողմից:

Քննարկում տեղի ունեցավ նաև «Փարիզյան համաձայնագրի» շրջանակներում կատարված աշխատանքների ուղղությամբ, որի առնչությամբ Նարեկ Սարգսյանի կողմից ներկայացվեցին այն աշխատանքները, որոնք իրականացվում են ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի և Ֆրանսիայի Հանրապետության Բնապահանության, կայուն զարգացման և էներգետիկայի նախարարության միջև՝ շենքերի և շինությունների գլոբալ դաշինքի շրջանակներում:

Քննարկվեցին նաև ազգային քաղաքաշինության քաղաքականության, խելացի քաղաքների, ինչպես նաև շենքերի էներգախնայողության և էներգաարդյունավետության խնդիրներին առնչվող մի շարք հարցեր:

7.Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

Համաժողովի ընթացքում Նարեկ Սարգսյանը հանդես է եկել ելույթներով՝ երկու հարթակներում ներկայացնելով օրակարգային խնդիրների վերաբերյալ Հայաստանի փորձը, արդյունքները և քաղաքաշինական պլանավորման հեռանկարները:

Առավել համառոտ ելույթի ժամանակ ներկայացվել են ազգային քաղաքաշինության քաղաքականության, խելացի քաղաքների ինչպես նաև շենքերում և շինություններում էներգախնայողության և էներգաարդյունավետության ուղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տարվող աշխատանքներն ու ձեռքբերումները:

Նարեկ Սարգսյանը Փարիզում մի շարք հանդիպումներ է ունեցել սփյուռքահայ ճարտարապետների և ներդրողների հետ, քննարկել նրանց կողմից Հայաստանում իրականացվող նախագծային խնդիրներին և նոր ներդրումային ծրագրերի ներգրավմանն առնչվող հարցեր:

Նարեկ Սարգսյանի Ժնև գործուղման ընթացքում շվեյցարաբնակ գործարար Վարդան Սիրմաքեշի հետ քննարկվել են Հայաստանի տարածքում իրականացվելիք մի շարք քաղաքաշինական ծրագրեր, մասնավորապես.

1. 2017 թվականի մայիսի 17-ին Ժնևում կայացած հանդիպման ժամանակ քննարկվել են «Հին Երևան» ծրագրի ներդրողի և նախագծի հեղինակի միջև էսքիզային նախագծի առանձին հատվածների լուծումների վերաբերյալ մոտեցումներն ու դրանց լուծման ուղիները: Քննարկման արդյունքում խնդրահարույց հարցերը պարզաբանվել են և պայմանավորվածություն է ձեռք բերվել ծրագիրը շարունակելու վերաբերյալ:

Առաջիկայում «Հին Երևան» ծրագրում ներառված տարածքի իրացված մասերում, ինչպես նաև Տերյան փողոցի ստորգետնյա հատվածում կսկսվեն հողային աշխատանքներ:

2. Միևնույն ժամանակ, մայիսի 18-ին Փարիզում ֆրանսահայ ճարտարապետ Գրիգոր Գալաչյանի հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել է Երևանի «Դալմա Գարդեն Մոլ» առևտրային համալիրի հարակից հատվածում 8 հեկտար մակերեսով տարածքում նույն ներդրողին սեփականության իրավունքով պատկանող բնակելի թաղամասի կառուցման ներդրումային ծրագիրը:

Վերը նշված ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքի կառուցապատման վերաբերյալ անհրաժեշտ ճշգրտված նյութերի լրակազմը (կառուցապատման չափորոշիչները՝ փողոցային ցանցի ուղղությունը, շենքերի թույլատրելի հարկայնությունը և այլն) առաջիկայում կտրամադրվի ներդրողին:

Միևնույն ժամանակ, սույն թվականի հուլիսի 2-րդ կեսին ներդրողի և ճարտարապետի հետ Երևանում կայանալիք հանդիպման ժամանակ կներկայացվի նշված ծրագրով նախատեսված տարածքի քաղաքաշինական հայեցակարգը:

3. Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև Գյումրի քաղաքի որոշակի տարածքներում ներդրումային ծրագրերի իրականացման առաջարկություններ՝

ա) Գյումրու մանվածքային ֆաբրիկայի վերակառուցման ընթացքը և լոկոմոտիվային դեպոյի հետագա վերակառուցման հարցերը,

բ) Վարդան Սիրմաքեշը Գյումրիում ժամացույցների և միկրոինդուստրիայի (ժամանակակից միկրոտեխնոլոգիաների կիրառմամբ) արտադրության մասնաշենքեր (արտադրանքի ցուցասրահներով) կառուցելու մտադրություն է հայտնել, ինչը կնպաստի գործարար միջավայրի բարելավմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Այս կապակցությամբ պայմանավորվածություն է ձեռք բերվել ներդրողի հետ քննարկել նշված առաջարկությունը՝ կառուցապատման համար անհրաժեշտ 10 հեկտար մակերեսով տարածքի ընտրության և ձեռքբերման խնդիրը հստակեցնելուց հետո:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվելիք մի շարք ներդրումային ծրագրեր:

8. Գործուղվող՝ Նարեկ Սարգսյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

20.05.2017 թվական